ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«19» սեպտեմբերի 2019 թվականի N:214 ք.Գյումրի

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N:1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 11-րդ և 22-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2019 թվականի հունիսի 21-ի N:27-2/27-2/10560-2019 գրությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետի պարտականությունները կատարող Ս. Հարությունյանի 2019 թվականի սեպտեմբերի 19-ի զեկուցագիրը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Հարությունյանին 2019 թվականի սեպտեմբերի 20-ին գործուղել քաղաք Երևան՝ «Մաստեր Սթայլ» ուսումնական կենտրոն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ «Գանձապետական հաշիվների կառավարման Client Treasury էլեկտրոնային համակարգ» թեմայով կազմակերպվող վերապատրաստման դասընթացին մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը մեկ օր՝ 2019 թվականի սեպտեմբերի 20-ին:
3. Սամվել Հարությունյանի՝ գործուղման գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի գլխավոր մասնագետ Բարսեղ Քոչարյանին:

4. Սամվել Հարությունյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է